ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Ծովասարի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում մեթոդիստի/0,75 հաստիքային միավոր/, 6 դաստիարակի/0,56 հաստիքայի միավոր/, երաժշտության դաստիարակի/0,75 հաստիքային միավոր/, ֆիզդաստիարակի /0,75 հաստիքային միավոր/ թափուր աշխատատեղերը համալրելու համար:

Մրցույթին կարող է մասնակցել դաստիարակի, երաժշտության դաստիարակի, ֆիզդաստիարակի թափուր պաշտոններին Կրթության եւ գիտության նախարարի 2024 թվականի N 20-Ն մարտի 27-ի հրամանով սահմանված տարիֆաորակավորման պահանջներին համապատասխանող անձը:

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ 22.10.2024թ – N 1981-Ա/2 հրամանի մշակված հարցաշարերի:

Մրցույթին մասակցելու համար ներկայացնել՝

1) դիմում (Ձեւ 1)

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ)

3) անձը հաստատող փաստաթուղթ.

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում)

5) ինքնակենսագրություն (Ձեւ 4)

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում) :

Մրցույթը տեղի կունենա 2026 թվականի դեկտեմբերի 28–ին ժամը 11:00 ին «Ծովասարի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնք Ծովասար բնակավայր 1-ին փողոց, 11/1 շենք:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ընդունվում են 2026 թվականի նոյեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի 24-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչև 18:00-ը՝ բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծովասար բնակավայր 1-ին փողոց, 11/1 շենք:

Էլեկտրոնային փոստի հասցե՝ tsovasarimankapartez@gmail.com :

Տեղեկությունների համար զանգահարել +374 94744339 :

Տնօրեն՝ Մարիամ Հակոբյան: